ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՔԱՂՎԱԾՔ

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 30.05.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Արտյոմ Գրիգորյանը, Մեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Մեյրան Աղաբեկյանը և Արևիկ Լոքյանը* :

Նիստին բացակայում էին՝

″Լուսավոր Հայաստան″ կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը , Հայկազ Միմիկյանը, Վահե Կոռյանը, Սանահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը;*

″Հայկական Վերածնունդ″ կուսակցության ավագանու անդամներ *Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;*

″Բարգավաճ Հայաստան ″ կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.05-ին նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ ավագանու ՀՅԴ խմբակցության անդամ *Արմինե Կյուրեղյանի* փոխարեն այսուհետ ավագնու անդամի պարտականություններ կկատարի *Արևիկ Լոքյանը* և հաջողություն մաղթեց նորագիր ավագանու անդամին:

Այնուհետ *Մ. Ասլանյանը* ներկայացրեց նիստի օրակարգը, հավելելով, որ Վանաձոր համայնքի ղեկավարին է դիմել ″Օրրան″ բարեգործական հասարակական կազմակերպությունը, խնդրելով սահմանված կարգով ազատել գույքահարկի գծով հարկային պարտավորություններից 2017 թվականի համար և առաջարկեց այն ներառել օրակարգի մեջ և քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ :

Միաձայն՝ 15 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ , ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների անվանումները հաստատելու մասին

   զեկ.՝ Ա.Օհանյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

   զեկ.՝ Ա.Ավագյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

   զեկ.՝ Ա.Ավագյան

4. Վանաձոր քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը

հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

5. Վանաձոր քաղաքի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

6. 2018թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Գործարանային փողոցի թիվ 1 կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

7. 2018թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձորի թիվ 8 ՆՈՒՀ-ի շենքի կառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

8. 2018թ. պետական բյուջեից հայտավորվող ««Վանաձորի ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

զեկ.՝ Լ.Դավթյան

9. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Առափնյա փողոցի անվանափոխման մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

10. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

11. Վանաձոր համայնքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 30/1-3 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը Արեն Վիրաբյանին օտարելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

12. Վանաձոր համայնքի ղեկավարի և «Արտավազդ և Հարություն» ՍՊԸ-ի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

13. Վանաձոր համայնքի ղեկավարի և «Արտավազդ և Հարություն» ՍՊԸ-ի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

14. Վանաձոր համայնքի ղեկավարի և Սիլվա Մայիլյանի միջև կնքված տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Կ.Սարոյան

15. «Հարինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Կ.Սարոյան

16. «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության» ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Կ.Սարոյան

17. Սեդա Մարիկյանի հետ կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Կ.Սարոյան

18. «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրված տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Կ.Սարոյան

19. ″Օրրան″ բարեգործական հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ՝ Վ. Դավիթավյան

20 . Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - . Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների անվանումները հաստատելու մասին:

- զեկուցեց՝ աշխատակազմի քարտուղար *Ա.Օհանյանը:*

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին և կարծիք արտահայտեցին՝

Վահագն Ավագյանը ՝ հանձնաժողովների կազմի վերաբերյալ ;

Արմեն Մատինյանը ՝ հանձնաժողովների ձևավորման անհարժեշտության մասին:

Զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- զեկուցեց՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը:*

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- զեկուցեց՝ աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ *Ա.Ավագյանը:*

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Գայանե Քալանթարյանը՝ հատկացումների խմբավորման նպատակի վերաբերյալ:

Մեյրան Ղամբարյանը՝ մարզիկներին պարգևատրումների ֆինանսական ծավալի պահպանման վերաբերյալ:

Խորեն Վարդանյանը՝ որոշման նախագծով հարկային բեռի թեթևացման վերաբերյալ:

Բոլոր հարցերին նիստը վարողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ և պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

4 ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին

- զեկուցեց Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ .՝ *Լ.Դավթյանը*

Զեկուցումից հետո հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տվեց նիստը վարողը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Արմեն Մատինյանը ՝ քաղաքապետարանի ենթակայության հիմնարկներիկ կողմից նախորդ տարիներին ծախսած էներգակիրների ծավալների վերաբերյալ:

Վահագն Ավագյանը՝ քաղաքի որոշ թաղամասերում կենտրոնական ջեռուցման համակարգի վերականգնման և փողոցային լուսավորության ցանցի զարգացման վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը՝ հանրապետության այլ բնակավայրերում նմանատիպ ծրագրերի իրականացման փորձի վերաբերյալ:

Արման Ափինյանը՝ ծրագրի շրջանակներում փողոցային լուսավորության գիշերային ժամերը երկարաձգելու վերաբերյալ

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և զեկուցողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

5. ԼՍԵՑԻՆ Վանաձոր քաղաքի շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին:

- զեկուցեց Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ .՝ Լ.Դավթյանը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Արմեն Մատինյանը ՝ սոցիալական և մարզկան ոլորտներում բնապահպանական խնդիրների բնորոշման վերաբերյալ:

Սոխակ Մելքոնյանը ՝քաղաքի վերաբերյալ տեղեկատվության և շրջանառվող բնապահպանակն զեկույցի վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը և Արեմն Մատինյանը ՝քաղաքի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և զեկուցողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում :

6. ԼՍԵՑԻՆ - . 2018թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձոր քաղաքի Գործարանային փողոցի թիվ 1 կամրջի նորոգում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին;

- զեկուցեց Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ .՝ Լ.Դավթյանը:

Նախագծի մասին լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նախագիծը նիստը վարողը դրեց քվեարկության :

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - 7. 2018թ. պետական բյուջեից հայտավորվող «Վանաձորի թիվ 8 ՆՈՒՀ-ի շենքի կառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին

- զեկուցեց ՝ Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ ՝ Լ.Դավթյանը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Գայանե Քալանթարյանը՝ նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու վերաբերյալ :

Խորեն Վարդանյանը՝ ծրագրի իրականացումից հետո մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակի ավելացման վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և զեկուցողը:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում

8. ԼՍԵՑԻՆ - 2018թ. պետական բյուջեից հայտավորվող ««Վանաձորի ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց » ՀՈԱԿ-ի շենքի վերակառուցում» ծախսային ծրագիրը հաստատելու մասին:

- զեկուցեց ՝ Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ ՝ Լ.Դավթյանը:

Նախագծի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Հարցեր չհնչեցին զեկուցողին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

8.1 ԼՍԵՑԻՆ – ԵՄ –ի կողմից հայտարարված «Համայնքի ղեկավարներ» հանուն տնտեսական զարգացման նախաձեռնությանն անդամագրվելու մասին տեղեկատվությունը

Նիստը վարողի առաջարկությամբ համայնքապետրանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ Լ.Դավթյանը ներկայացրեց տեղեկատվություն ԵՄ –ի կողմից հայտարարված «Համայնքի ղեկավարներ» հանուն տնտեսական զարգացման նախաձեռնությանն անդամագրվելու վերաբերյալ քաղաքապետի համաձայնության և անդամության հայտը ներկայացնելու վերաբերյալ:

Ավագանին տեղեկատվությունն ընդունեց ի գիտություն:

9. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Առափնյա փողոցի անվանափոխման մասին :

- զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ ՝ Ս.Աբովյանը

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 ,ձեռնպահ՝1 (Վահագն Ավագյան) , ընդունվեց որոշում:

10. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին :

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ ՝ Ս.Աբովյանը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 30/1-3 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը Արեն Վիրաբյանին օտարելու մասին :

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ ՝ Ս.Աբովյանը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարի և «Արտավազդ և Հարություն» ՍՊԸ-ի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ ՝ Ս.Աբովյանը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարի և «Արտավազդ և Հարություն» ՍՊԸ-ի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս.Աբովյանը:

Զեկուցողին և նիստը վարողին հարցեր ուղղեցին՝

Գայանե Քալանթարյանը՝ ներկայացված նախագծի և վճարովի կայանատեղերի վերաբերյալ ավագանու կողմից նախկինում ընդունված որոշման հետ իրավական առնչության վերաբերյալ:

Սեյրան Ղամբարյանը՝ քաղաքի որոշ հատվածներում ավտոմեքենաների կանգառման նպատակահարմարության վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը, զեկուցողը, աշխատակազմի քարտուղարը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարի և Միլվա Մայիլյանի միջև կնքված տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ.Սարոյանը:

Զեկուցողին և նիստը վարողին հարցեր ուղղեց՝

Գայանե Քալանթարյանը՝ վարձակալի կողմից գործունեություն իրականացնելու տեսակի վերաբերյալ:

Հարցին պատասխանեց և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեցին նիստը վարողը, աշխատակազմի քարտուղարը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - «Հարինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Կ.Սարոյանը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհանչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ - «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի

վերահսկողության պետական տեսչության» ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին :

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ ՝ Կ.Սարոյանը:

Ավագնու անդամների կողմից հարցեր չհանչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում:

17. ԼՍԵՑԻՆ - Սեդա Մարիկյանի հետ կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ ՝ Կ.Սարոյանը:

Ավագնու անդամների կողմից հարցեր չհանչեցին:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

18. ԼՍԵՑԻՆ - «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրված տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ ՝ Կ.Սարոյանը:

Զեկուցողին և նիստը վարողին հարցեր ուղղեց՝

Գայանե Քալանթարյանը ՝վարձակալի կողմից երեխաների ստեղծագործական ակրողությունների բարձրացման արդյունքների վերաբերյալ:

Հարցին պատասխանեց և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 , ընդունվեց որոշում:

19. ԼՍԵՑԻՆ - ՞Օրրան՞ բարեգործական հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին :

-զեկուցեց աշխատակազմի Առևտրի և սպասարկման, տրանսպորտը համակարգող բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար ՝ Վ.Դավիթավյանը:

Զեկուցումից հետո հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տվեց նիստը վարողը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Վահագն Ավագյանը, Գայանե Քալանթարյանը ՝ գույքահարկի արտոնության կիրառման դեպքում նախադեպերից խուսափելու վերաբերյալ:

Խորեն Վարդանյանը ՝ կազմակերպության համահայաստանյան գործունեության վերաբերյալ:

Հարցերին պատասխանեց և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը

Նիստը վարողի կողմից առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 կողմ, ձեռնպահ՝2 (Դ. Սիմոնյան, Վ. Ավագյան) ընդունվեց որոշում:

20. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել հունիսի 21-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության: Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի հունիս 21-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց

Աշխատակազմի Ք.Տ. և Ա. բաժնի պետ Է. Հովսեփյանը